

թի: Հակիմ պատմական տեսութիւն մ'ըրտւ Հայոց զիւցազնական քրիստոնէութեան և դարերով մարտնչող Եկեղիքին և Ազգ կրօնական կենդանի հաւատքին աղբիւրներուն (ընտանիքին, Եկեղեցին և Պըպուրոցներուն) դերին և համազործակցութեան մեթօդին վրայ. Թուրքիոյ այժմ անուպաստան Հայութեան և Հայոստանի հայոց կրօնական դաստիարակութեան վիճակին անդրագարձաւ: Կիլիկիոյ Տ. Սահակ Բ. Վեհ. Կաթողիկոսին՝ կիր. վարժարարուներու մասին Կանդակէն մէջքերուններ լրաւ, իր Հայոց Եկեղեցու բարձրաստիճան հոգեստրականութեան համակրութեան փառար: (Կոնդակէն տասն օրինակներ ժողովէն վերջ փափաքողներուն ցրաւեցան): Պատկերացու ներկայիս Միւրիոյ հայոց մէջ հիմնուած կիր. Վարժարարուներու յառաջդիմութիւնը՝ շնորհիւ անոնց Բնդէ. Քարտուղար Պրն. Լեռն Զէնեանի անդուլ ջանքերուն, Առաջնորդներու գործակցութեան և Կաթողիկոսարանի պաշտօնական հովանուորութեան: Ասպա իր խօսքը փակեց շեշտելով՝ թէ բոլոր Եկեղեցիները պէտք է օրինակ առնեն պաշշակի դաստիարակութեան վարիչ սկզբունքներէն. և նոյնքան հուանդ, սիսթեմ և համոզում զնին իրենց կրօնական դաստիարակութեան զործին մէջ նոր սերունդը Աստուծոյ բիրելու համար, ո՛քան պալշելիներ զրած հն՝ մանուկները կրօնէն, Եկեղեցին և Աստուծմէ ուժացնելու և երիտասարդները քրիստոնէութեան տարհամոցելու համար:

Ամենավերջին ատենախօսը եղաւ Դոկտ. Դուսալդ Ֆրէյզը (Ակտուա), որ Համամուղովի գործը ներկայացուց գեղեցիկ և միտնագամայն զուարթ ոճով մը: Դոկտ. Ֆրէյզը պերճախօս բեմբասաց մըն է. Կեզր. Ավրիլի էլ մէջ աշխատած է 30 տարիներ: Տեսայ հրաւիրագիրը՝ որով նոյ. ի մէջ կոչուած էր քարոզելու Անգլիոյ թագաւորին և արքայական գերգաստանին մատուորին մէջ:

Դրուազներ.— Համաժողովի պատգամաւորները մեծահանգէս և չքեզ թափուով մը քալեցին Մայրաքաղաքին լայն պողոտաներէն՝ ծաղկեապսակ մը զնիւու համար Հունդարիոյ Անձանօթ զինուորին զերեզմանին վրայ:

Բուգապետի քաղաքապետը պատուիրակներուն թէյասեղան մը տուաւ, ուր

ճառեր խօսուեցան պետական պաշտօնեաներէ և մաճառ հին և նոր ժողովրդային երգեր լսեցինք:

Օգոստ. 15ին կէսօրէ վիրջ ժամը 1-7 յատկապէս վարձուած չոպենուով 335 պատագամաւորներ նաւազնացութիւն մը վայելցին Դանուրի վրայ՝ մինչև Վիշիկրտուր հոմիկական շրջանէ բանտի մը, Կորդինոս իշխանին հոչակաւոր զրագարանին և այլ շէնքերու մեացորդներ տեսանք:

Համաժողովի փակման առիթով տեղի ունեցաւ Բարեկարգեալ Եկեղեցին մէջ Հազորդութեան Խորհուրդը և սրտառուչ այդ պաշտամունքին միջոցին հազորդուեցան հազարաւորներ՝ աճիւ եւ երկիւղածութեամբ: Ես ոչ առանց յուզման հանդիսատես եղայ եւրոպացի 27 ազգերէ հոււտքուած, երիտասարդութեան մէջ զործող մարզոց եւ կիներու ընտիր բազմութեան, որ Ս. Սեղանին մօտեցան ջերմ եռանդով, նորոգելու համար անգամ մըն ալ Տէր Յիսուսի Աւետարանին և նոր սերունդին ծառայելու իրենց նուիրական ուխտը:

Տարակոյս չունիմ թէ պատգամաւորներ օրհնուած գարձան իրենց երկիրները, խոր ցնծութիւն և նոր ներշնչումներ տանելով՝ Ս. Աւետարանի նուիրական Օրէնքը և Փրկչին Զայնն ու Պատկերը նոր սերունդին հոգւոյն մէջ զրոշմելու զործին:

ԾԱՀՀ ԵՊԻՍԿՈՊՈՍ ԳԱԱՊԱՐԵԱՆ

Ա.Ա.Ա.Ա.Ր.Ձ. Գ.Ա.Հ.Ա.Թ.Ի.Խ.

Դուն, Տէր, Դուն այս տարին իր լրման հասցուցիր: Ծնունակալ եւ մեզէն իմ Ասուած ծ եւ իմ Տէր: Էսիներն ալլազան Քեզմով միայն կը պահուին: Պատին ալ բա զյոր տարուան Քեզմով միայն կ'օհնիրի: Չըրիր որ Քեզ նախնան էակիներն համուր: Մինչդեռ այդ նախնան փոխակե Դուն ինձնէ: Միայն սեր կը խնդիր: Ենչ շընաղ եւ վրսեմ եւ ձրի առեւտուր: Կ'օհնին, Տէր, ես զգիկ այժմ եւ մինչեւ իսպան: